Վանի թագավորության

- Վանի թագավորության հիմնադրման մասին վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է մ. թ. ա. XIII–XI դարերում՝ Վանա լճից հարավ հիշատակվող Ուր(ու) ատրի ցեղային միության հիմքի վրա: Մեկ այլ տեսակետ այն կապում է Արարատյան դաշտի հետ՝ ելնելով թագավորության Արարատ-Ուրարտու անվանումից: Ներկայումս ընդունված է այն տեսակետը, ըստ որի՝ թագավորության սկզբնատարածքը Վանա լճի ավազանն է, որի հետ էլ կապվում է թագավորության հիմնական ինքնանվանումը՝ «Բիայնիլի» (այդ պատճառով էլ գիտության մեջ պետությունը հայտնի է նաև «Վանի թագավորություն» անվամբ):

Տուշպայի հիմնադրման արձանագրությունը

- Առաջին վկայված արքան Արամե Ուրարտացին է, որի անունն ասորեստանյան աղբյուրներում 3 անգամ հիշատակվում է մ. թ. ա. 859–843 թթ-ի ընթացքում: Ըստ այլ տեսակետի՝ Վանի թագավորության հիմնադիր-արքան Սարդուրի Ի-ն է՝ Լութիպրիի որդին, որն էլ մ. թ. ա. 830-ական թվականներին կառուցել է Տուշպա (Տոսպ) մայրաքաղաքը: Տուշպայի հիմնադրման արձանագրություններում նա իրեն անվանել է «Նաիրի երկրի արքա» և ներկայացել «մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, արքաների արքա» տիտղոսներով:

ՍԱՐԴՈՒՐԻ Ա

- **Սարդուրի Ա** (Ք.ա. մոտ 835-825թթ), հաջողությամբ դիմակայել է Ասորեստանի կողոպտչական արշավանքներին, ընդարձակել և ամրապնդել թագավորության սահմանները:Սարդուրի Ա միավորել է Վանա լճի ավազանի երկրները և հիմնադրել արքունի նոր բերդաքաղաք Տուշպան (Տոսպավան):

ԻԾՊՈՒԻՆԻԻ բարեփոխումները

- Գրային բարեփոխում՝ տեղական սեպագրի ստեղծում:
- Միասնական դիցարանի ստեղծում:
- Ք.ա 820-ական թթ. ՈՒրմիո լճի ավազանի հարավում ընդլայնում է թագավորությունը:



«Միերի դուռը» Վանում

Վանի (Տուշպա) միջնաբերդը

ՄԵՆՈՒԱ

- Մենուայի օրոք (Ք.ա 810-876թթ) Վանի թագավորությունը հասել է աննախադեպ հզորության: Երկիրը տնտեսապես հզորացնելու համար նա ծավալել է շինարարական աշխատանքներ, ստեղծել է ոռոգման ցանց. հատկապես նշանավոր է ցայսօր գործող 72 կմ երկարությամբ Մենուայի ջրանցքը:

Մենուայի ջրանցքը

- Մենուան հատուկ ուշադրություն է դարձրել **ռազմական շինարարությանը**՝ ստեղծելով **ամրաշինական մեծ ցանց։** Մենուան հաղթանակներ է տարել տարածաշրջանի ամենահզոր պետության՝ Ասորեստանի նկատմամբ և Վանի թագավորությունը վերածել **գերտերության։**

Թևավոր ցուլի բրոնզե ֆիգուր, որով զարդարվել է արքայական գահը

Բրոնզե գավաթի հատված՝ Սարդուրի II-ի գրությամբ

Մետաղե կաթսա

Բրոնզե վահան և սաղավարտ (մ. թ. ա VIII դար)

- Պեղումներից հայտնաբերված մշակութային արժեքները պահպանվում, ուսումնասիրվում և ցուցադրվում են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, Հայաստանի պատմության, Երևան քաղաքի, Բրիտանական (Լոնդոն), Առաջավորասիական (Բեռլին) թանգարաններում, Էրմիտաժում (Սանկտ Պետերբուրգ) և այլուր: